

Геноцид армян перед судом. Судебный процесс Талаата паши. Стенографический отчет (под редакцией профессора, доктора исторических наук Степана Смбатовича Степаняна). Ереван, Сурб-сер, 2007, 270 с.

Հայոց ցեղասպանությունը դատարանի առաջ. Թալեաթ փաշայի դատավարությունը. սղագրական հաշվետվություն (պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Ամբասի Ստեփանյանի խմբագրությամբ), *Երևան, Սուրբ-սեր, 2007, 270 էջ*:

Հայոց եղեռնի՝ XX դարի առաջին ցեղասպանության խնդիրը քաղաքական հայագիտության կարևորագույն հարցերից է, որն այսօր էլ չի կորցրել իր ոչ գիտական, ոչ էլ հասարակական-քաղաքական նշանակությունը: Վերջին տասնամյակների ընթացքում այդ խնդիրը դուրս է եկել զուտ գիտական ուսումնասիրությունների շրջանակներից, դարձել հայ-թուրքական հակամարտության, միջազգային քաղաքական ու հասարակական կազմակերպությունների քննարկումների առարկա՝ հանդիսանալով Հայաստանի և սփյուռքի ազգային, քաղաքական, հոգևոր կյանքի անբաժանելի մասը:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Ստեփանյանի առաջաբանով, ծանոթագրություններով և խմբագրությամբ *Երևանի «Սուրբ-Սեր»* հրատարակչությունը ռուսերենով լույս է բնծայել «Թալեաթ փաշայի դատավարությունը» գրքի երկրորդ, լրացված հրատարակությունը: Ռուսերենով գիրքն առաջին անգամ տպագրվել էր Մոսկվայում, 1992 թ.: Հայկական հարցին և հայերի ցեղասպանությանը վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր, ժողովածուներ, վկայություններ ու գիտական աշխատություններ են հրատարակվել տարբեր լեզուներով, սակայն դրանց շարքում շարունակում է անզնահատելի այժմեական նշանակություն պահպանել 1921 թ. հունիսի 2-3-ը Բեռլինում կայացած Սոդոմոն Թեհլիրյանի դատավարության սղագրությունն ու նրա հետ առնչվող նյութերը: Այդ հանրահայտ դատավարությունը, փաստորեն, XX դ. առաջին ցեղասպանությանը վերաբերող կարևորագույն վկայություններից է, երբ գերմանա-

կան դատարանի առջև որպես մեղադրվող էր կանգնել Մեծ եղեռնի ոճրագործ կազմակերպիչ՝ Թալեաթ փաշային սպանող, ժողովրդական վրիժառու Սոդոմոն Թեհլիրյանը: Դատավարության պատմական նշանակությունն այն է, որ բացահայտեց հայերի ցեղասպանության ողջ էությունը, մերկացրեց արևմտահայության դահիճներից մեկին՝ Թալեաթ փաշային և արդարացրեց Թեհլիրյանին: Եվ ճիշտ այդ պատճառով էլ այն պատմության մեջ մտավ ոչ թե որպես Թեհլիրյանի, այլ որպես Թալեաթ փաշայի դատավարություն:

Դատավարության նյութերն առաջին անգամ տպագրվել են գերմաներեն դեռևս 1921 թ. Բեռլինում: Այդ գրքի առաջաբանը, որը թարգմանաբար զետեղված է նաև ռուսերեն նոր հրատարակության մեջ, գրել էր գերմանացի հայտնի գրող և հրապարակախոս Արմին Վեգները, որը, պատերազմի ժամանակ գերմանական ռազմական առաքելության սանիտարական ծառայության մեջ լինելով, ականատես էր դարձել հայերի տեղահանության և ցեղասպանության սարսափելի պատկերներին ու որպես վկա հանդես եկել բեռլինյան դատավարության ժամանակ: Հետագայում Վեգները սերտ կապեր է հաստատել Բեռլինում բնակվող Ավետիք Իսահակյանի, նաև հայ ուսանողների՝ Գարո Մելիք-Օհանջանյանի և այլոց հետ: Նա Հայ դատի մեծ պաշտպաններից էր, մի քանի անգամ այցելել էր Հայաստան, 1968 թ. Օիժեռնակաբերդում ծաղկեպսակ է դրել Մեծ եղեռնի զոհերի հուշակոթողին: Իր առաջաբանում նա գրում էր. «Հայ ժողովրդի ողբերգությունն աննախադեպ իրադարձություն է այս պա-

տերազմում և, թերևս, մարդկության ամբողջ պատմության մեջ: Կատարված հանցագործությունն այնքան հրեշավոր է, որ նրա արձագանքը ցնցեց նույնիսկ պատերազմական ժամանակներում, տարածվեց աշխարհի երկրներում... Եվ ահա հայ անհայտ ուսանողի ատրճանակի կրակոցը, որը սպանեց Թուրքիայի ներքին գործերի նախկին նախարարին, ու դրա հետ կապված դատավարությունը կրկին ամբողջ աշխարհի և առաջին անգամ գերմանական ժողովրդի ուշադրությունը սևեռեցին համաշխարհային պատերազմի ամենաարյունալի էջին, ակնհայտ դարձավ ճշմարտությունը՝ երիտթուրքական կառավարության կողմից մի ամբողջ ժողովրդի ծրագրավորված բնաջնջումը: Իրադարձությունների զարմանալի հորձանուտում տեղի ունեցավ այն, որ փաստերի ծանրության տակ, տառապող ու լռակյաց զոհը ակամայից դարձավ մեղադրող, և մեղադրյալի աթոռին այլևս չկա Սողոմոն Թեհլիրյան, այլ կա արյունաշատախ ննջեցյալի սուվերը, այնպիսի խորհրդավոր իրավիճակի խորիմաստ հաստատում, երբ մեղավոր է ոչ թե սպանողը, այլ սպանվածը» (էջ 5): Ա. Վեգներին պատկերավոր խոսքերով՝ Ս. Թեհլիրյանը «միայն խորհրդանիշ էր, մի հյուլե, որի մեջ խտացված ու ցայտուն արտացոլված էին հայ ժողովրդի վերքերը, նրա աննախադեպ ցավը, խիզախ ինքնապաշտպանությամբ արդարացի հատուցման նրա տենչը» (էջ 6): Ա. Վեգները հերքում էր ինչպես երիտթուրքերի, այնպես էլ պատմության կեղծարարների այն անհիմն պնդումը, թե, իբր, արևմտահայության տեղահանությունը պայմանավորված էր «ռազմական անհրաժեշտությամբ»: Նա գրում էր. «Ինչպես բացատրել հայերի բռնի տեղահանությունը Արևմտյան Անատոլիայի վիլայեթներից, որտեղ նրանց թվաքանակը չափազանց քիչ էր և վտանգ չէր կարող ներկայացնել: Ավելին, նրանք ռազմական գործողությունների թատերաբեմից հարյուրավոր մղոններ հեռու էին և զբաղված էին խաղաղ ու անբասիր աշխատանքով» (էջ 8):

«Թալեաթ փաշայի դատավարության» գերմաներեն երկրորդ հրատարակությունը տպագրվեց կրկին Բեռլինում՝ հայերի ցեղասպանության պատմության հայտնի մաս-

նագետ Թեսսա Հոֆմանի մասնակցությամբ և առաջաբանով, որը նույնպես գետեղվել է ռուսերեն հրատարակված այս նոր գրքում: Իր առաջաբանում նա եկել է կարևորագույն մի եզրահանգման. «Բոլոր դեպքերում այսօր հայկական ճակատագիրը, ըստ երևույթին, կրում է համաշխարհային հասարակայնության մոռացկոտ հիշողության կնիքը, որը դրանով նպաստել և շարունակում է նպաստել ապագա բոլոր ցեղասպանություններին» (էջ 19-20):

Գրքի նոր հրատարակության առթիվ գրած ծավալուն առաջաբանում Ս. Ստեփանյանը՝ Գերմանիայի գրադարաններում և արխիվներում կատարած ուսումնասիրությունների հիման վրա, ռուսալեզու ընթերցողին է ներկայացնում Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության համառոտ պատմությունը, Ս. Թեհլիրյանի կյանքի ուղին, Բեռլինում կատարված իրադարձությունների մանրամասները, ինչպես նաև Հայոց եղեռնի միջազգային ճանաչմանը վերաբերող տեղեկություններն ու ժամանակակից մոտեցումները: Ս. Ստեփանյանի առաջաբանը, ծանոթագրություններն ու արխիվներում հայտնաբերված լուսանկարները, ըստ էության, կարելի է համարել հաջողված ինքնուրույն ուսումնասիրություն խնդրո առարկա հարցի պատմության բնագավառում:

Նկատի առնելով վերոշարադրյալը, անհրաժեշտություն է դարձել գրքի հայերեն նոր հրատարակությունն իր գիտական ապարատով՝ ժամանակակից առաջաբանով, ծանոթագրություններով և արխիվային լուսանկարներով: 1990 թ. Ստեփան Ալաջաջյանի առաջաբանով տպագրված հայերեն հրատարակության արևմտահայերենից կատարված թարգմանությունը կատարյալ չէր, ուներ բացթողումներ ու անճշտություններ: Ինչպես պատմագիտական, այնպես էլ քաղաքական այժմեական նշանակություն կունենար նաև գրքի այլ օտար լեզուներով, և, առաջին հերթին, անգլերենով հրատարակումն ու տարածումը: Դրանով մեկ անգամ ևս պատասխան տրված կլինեթ թուրք և օտար այն հեղինակներին, որոնք դեռևս շարունակում են աղավաղված ձևով ներկայացնել հայ ժողովրդի արևմտյան հատվածի ողբերգական պատմությունը:

ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ